# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

*Ջերմուկ քաղաքի Չախափնյակ թաղամասի 16-րդ բազմաբնակարան շենքի առաջին հարկում գտնվող մարզադպրոցը զբաղեցնում է 468քմ մակերես:*

*Շինության ներկայիս վիճակը. տարածքը, որտեղ գտնվում է սպորտպրոցը, տիպային չէ և ի սկզբանե նախատեսված չի եղել ծառայելու նման նպատակների համար, ուստի չի համապատասխանել նորմերին, ողջ շենքի ներսում սենյակների և սրահների կենտրոնից, իջնում են կանգնակներ, ջրի, կոյուղու և դեռ խորհրդային տարիներից մնացած կենտրոնական ջեռուցման խողովակներ, որոնք չեն օգտագործվում ավելի քան 18 տարի:*

*Շինությունը չունի ջերմամեկուսիչ և խոնավությունից պաշտպանվելու համար նախատեսված շերտեր, այդ իսկ պատճառով ներսում շատ ցուրտ է և խոնավ: մարզադպրոցում չկա լոգարան, տաք ջուր, օդափոխության համակարգ, ներսի պատերը, հատակը և առաստաղը գտնվում են անմխիթար վիճակում:*

*Նախատեսվում է՝*

*բարեկարգել մարզադպրոցի ողջ տարածքը՝ գործող ստանդարտներին համապատասխան, տեղափոխել մուտքի դուռը /1 հատ երկփեղկ 2x2մ չափերի/ շենքի հակառակ ճակատային կողմ՝ ավելի հարմար և ավելի հասանելի լինելու համար, կառուցել հաշմանդամների համար նախատեսված հարմարանքներ ներս մտնելու համար տեղադրել մետաղապլաստե, երկշերտ ապակեպատ, սպիտակ պատուհաններ 33 քմ, մետաղապլաստե դռներ 36.2քմ: Հատկացնել մոտ 180քմ տարածք ֆիտնես կենտրոնին, և ավելի քան 240քմ տարածք մարզադպրոցի համար, ունենալ 1 ընդունարան /12.3քմ/, 2 հանդերձարան /9.57քմ և 8.5քմ/, 2 սանհանգույց /13քմ և 18.3քմ/, 1 բուժական մերսման սրահ /11քմ/, ֆիտնեսի կարդիո և ուժային պարապմունքների համար 2 սենյակ /35.4քմ և 55.8քմ /, յոգայի սրահ /32.4քմ/ համապատասխան կահավորումով, սպորդպրոց որում կլինի 1 բոքսի ռինգ /30.5քմ/, 1 ըմբշամարտի գորգ /36.2քմ/ համապատասխան կահավորումներով, 2 աշխատասենյակ /11քմ և 10քմ/, թենիսի սրահ /32.4քմ/ ունենալ մշտական տաք և սառը ջուր, ջեռուցում և օդափոխության համակարգ:*

*Աշխատանքները ներառում են՝ պատերի քանդում /6քմ/, չքանդվող պատերի գաջի քանդում /15քմ/, դռների ապամոնտաժում /20.3քմ/, պատուհանների և ապակեբլոկների ապամոնտաժում /84.5քմ/, կանգնակների առկա դիրքի տեղափոխում /8 հատ/, հատակի բետոնե առկա ոչ հարթ շերտի քանդում /21քմ/, ավելացվող արտաքին մասի հիմքերի քանդում /8.1գմ/, հիմքերի նախապատրաստական շերտի պատրաստում /13քմ/, հիմքերի և կոնստրուկտիվ մասի պատրաստում ամրանավորում /13քմ/, ավելացվող արտաքին մասի բետոնե հատակի նախապատրաստում /13քմ/, ռետինե սեյսմիկ կար /15գմ/, ամբողջ ներքին տարածքի հատակի ջերմամեկուսացում, բետոնե շերտ, ջրի խողովակների, ջեռուցման խողովակների, կոյուղիների տեղադրում /27գմ/, վինիլային հատակի համար նախապատրաստական շերտ, միջնորմերի շարում /218քմ/, պատերի գաջում, դռների տեղադրում /36.2քմ/, պատուհանների տեղադրում /33 քմ/, արտաքին պատերի երեսապատում /192քմ/, էլեկտրամոնտաժ, ծեփամածիկի քսում, ներկում, սան տարածքի պատերի և հատակի սալիկապատում /37.5քմ/, ներքին հարդարում, վինիլային հատակ*

*/335քմ/, օդափոխության համակարգի պատրաստում տեղադրում, ձգովի առաստաղի տեղադրման աշխատանքներ և վերջնական կահավորում:*

*Բարելավել արտաքին տեսքը և ունենալ ջերմա և խոնավակայուն արտաքին պատեր: Նախագծի հիմքում ընկած բոլոր կատարվող աշխատանքները որևէ ազդեցություն չպետք է ունենան հիշյալ բնակելի շենքի կոնստրուկցիայի վրա:*

**Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան**

**Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru**

**Համայնքի ղեկավար՝** **Վարդան Հովհաննիսյան**

Կ.Տ.